

ՄԱՍՈՒԼԻ ՂԵՐԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Անչափ կարևոր է մամուլի ղերը հասարակական կյանքի տարբեր բնագավառների համար: Չանգվածային լրատվության միջոցները (ԶԼՄ—ները) բազմակողմանիորեն արտացոլում են մեր առօրյա կյանքը և նրա խնդիրները:

Ռադիոյի, հեռուստատեսության և զանգվածային հաղորդակցման մյուս ձևերի մեջ հիմնական դերն, ամշուշտ, պատկանում է մամուլին:

Մամուլում, ինչպես նաև ԶԼՄ—ների տեղեկատվություններում, զգացվում է օրերի շունչն ու զարկերակը: Սյուտեղ արտացոլվում են նաև լեզվի արդի վիճակը, նրա փոփոխությունների ընթացքը: Այն ամմիջականորեն է արտացոլում լեզվի բառապաշարում տեղի ունեցող փոփոխությունները նպաստելով նրա զարգացմանն ու նորոգմանը: «Ձարգացման այդ ընդհանուր գործընթացը,— գրում է Էդ. Աղայանը,— իրացվում է բառապաշարի հարստացումով, բառապաշարի իմաստաբանական զարգացումով և բառապաշարի կատարելագործումով»¹:

Բառապաշարի հարստացումն, ինչ խոսք, միշտ էլ կատարվում է լեզվի ներքին միջոցներով՝ բառաբարդումով և ծանցումով, նորակազմ բառերի ստեղծումով: Հասարակական կյանքում, գիտության և տեխնիկայի մեջ կատարվող փոփոխություններն անմիջականորեն արտացոլվում են լեզվի բառապաշարի մեջ: Կյանքում հանդես եկող յուրաքանչյուր առարկա, երևույթ պահանջում է բառային անվանում: Այդպես են առաջանում նորաբանությունները լեզվի մեջ, որոնք կարճ ժամանակում լայն գործածություն ստանալով՝ դառնում են ընդհանուրին հասկանալի լեզվական իրողություններ:

Բառաստեղծման և բառապաշարի նորոգման գործընթացը նոր հունի մեջ մտավ հատկապես 20—րդ դարի 60—70—ական թվականներից սկսած, երբ հասարակական միտքը ձեռքագատվեց կաղապարված մտածողությունից:

Գիտության ու տեխնիկայի զարգացումն իրենց հերթին նպաստավոր պայմաններ ստեղծեցին լեզվի բառապաշարի հարստացման ու զարգացման համար:

Անցյալ դարի 80—ական թվականներից մեր ազգային գաղթոնքի արտահայտություններից մեկը դարձավ հայոց լեզվի ղերի բարձրացումը, նրա գործառության պայտհովումը պետական ու հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Օրախնդիր հարց դարձան լեզվաշինության ու բառային փոխառությունների հարցերը:

Փոխառությունների հարցում նկատվեցին որոշակի դրական միտումներ լեզուն մաքրել նրան արհեստականորեն պատվաստած օտար բառերից ու տերմիններից և դրանք փոխարինել հայերեն համարժեքներով: Ճիշտ է նկատված, որ «եթե օտար բառի իմաստը կարող ենք արտահայտել հայերենի բա-

¹ Տես է. Բ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 167—168:

ռակագնական միջոցներով, առանց իմաստի խախտում առաջ բերելու, պետք է գործածենք իայերեն համարժեքը, իսկ եթե ոչ, օտար կամ փոխառյալ բառը»²:

Գարկ է նշել, որ այս գործում զգալի աշխատանք կատարեց Լեզվի պետական տեսչության բարձրագույն խորհուրդը, որի որոշումները պարբերաբար տպագրվում էին մամուլում՝ համապատասխան բառացանկով: Բազմաթիվ օտար բառերի փոխարեն առաջարկվեցին դրանց իայերեն համարժեքները, որոնցից շատերն այսօր համընդհանուր գործածություն են ստացել: Գմնտ.

բրիֆինգ – ճեպագրույց
բիզնեսմեն – գործարար
ցիկլ – պարբերաշրջան
էլիտա(ր) – ընտրանի
էլեկտորատ – ընտրազանգված
պրինտեր – տպիչ
քսերոքս – պատճենահան
սլալոմ – ոլորասահք
ինդեքս – դասիչ
ինֆորմացիա – տեղեկատվություն
կոնպուտեր – համակարգիչ
վիդեոկասետ – տեսանկարի
ֆարմակոլոգիա – դեղաբանություն
դիսպետչեր – կարգավար
տոտալիտարիզմ – ամբողջատիրություն
մենեջմենտ – կառավարում
վաուչեր – հավաստագիր

էլիտա – ընտրանի
լեզիտիմ – օրինական
սինիսրոն լոդ – զեղալոդ
բոբսլեյ – ղեկասահմակ
դեկլարացիա – հռչակագիր
ինվեստիցիա – ներդրում
ինֆորմացիոն – տեղեկատվական
աուդիոկասետ – ձայներիզ
էքսպերտ – փորձագետ
ֆարմացևտ – դեղագործ
պրեզենտացիա – շնորհանդես
կոնվենցիա – համաձայնագիր
լոմբարդ – գրավատուն
ուլտիմատում – վերջնագիր
կոնցեպցիա – հայեցակարգ
կոնտրակտ – պարտավորագիր
դիվիդենտ – շահաբաժին և այլն:

Բառապաշարի համալրման և նորոգման ընթացքն, իհարկե, շարունակվեց նաև հետագա տարիներին: Միանգամայն ճիշտ է նկատել լեզվաբան Ս. Էլոյանը, որ «իայերենի բառաստեղծական, բառային կազմի համալրման ու կատարելագործման գործընթացը երբեք այնքան ցայտուն չի դրսևորվել, որքան դարավերջի 90–ական թվականներին»³:

Այդ տարիներից սկսած, կապված հասարակական նոր հարաբերությունների ու մեր կյանքում կատարվող տեղաշարժերի հետ, նկատվեց որոշակի աշխուժացում նաև լեզվի զարգացման ընթացքի մեջ՝ հատկապես բառապաշարի հարստացման ու կատարելագործման ուղղությամբ: Լեզվի բառապաշարը հարստացավ հասարակական նոր հարաբերություններն արտահայտող բազմաթիվ նորակազմություններով, որոնք իրենց կիրառական հաճախականությամբ արդեն որոշակի տեղ ունեն լեզվի մեջ:

Դրանք իրենց հիմնական մասով կազմված են ժամանակակից իայերենի բառակազմական կաղապարներով, բաղադրիչների ճիշտ զուգադրությամբ և

² Տես Ս. Արդոսյան, Բառային փոխառությունների և լեզվի մաքրության հարցի շուրջը.

«Պատմա-բանասիրական հանդես», 1997, թիվ 2, էջ 113

³ Տես Ս. Էլոյան, Արդի իայերենի նորաբանությունների բառարան, Երևան, 2000, էջ 5:

իմաստային ներթափանցողի հաշվառումով: Այդպիսի բառերից են՝ **դոլարափոխություն, ընտրաժամկետ, ընտրակաշառք, ընտրակեղծիք, ընտրափուլ, կապուղի, կինոգործ, կրթավճար, հեռուստաալիք, հեռուստաբանակեն, մարզպետարան, նավթահումք, ջրավարձ, տեսանյութ, խոսնակ, հայաթափություն, հարկատեսակ, կրթավճար, կալանախուց, իշխանամետ, բուժելագործ, թափոնահոր, ավիաաղետ, ժամագոտի, ժամափոխություն** և այլն:

Բառապաշարի մեջ տեղի ունեցող փոփոխություններն ընդհանրապես արտացոլվում են բացատրական բառարաններում: Սակայն ոչ մի բառարան չի կարող ամբողջությամբ ընդգրկել լեզվի բառապաշարի մեջ գրեթե ամեն պահի կազմվող և գործածվող բառերը, առավել ևս նորակազմությունները, բանի որ նոր բառերի առաջացումը չընդհատվող գործընթաց է, և հնարավոր չէ նորակազմ բառը ամմիջապես ներառել բառարանի մեջ: Դա առավելապես վերաբերում է բացատրական բառարան կազմողներին:

Լեզվի զարգացումը երբեք կանգ չի առնում: Նորակազմ բառերով ու նոր իմաստներով բառապաշարի հարստացումը նրա զարգացման բնականոն ուղին է, որն անընդհատ շարունակվում է: Հետևաբար, լեզվական նորաբանություններով բացատրական բառարանների համալրումը արդի բառարանագրության առաջնահերթ խնդիրներից է: Այդ գործընթացը ցույց կտա լեզվի բառապաշարի մեջ կատարվող տեղաշարժերն ու պատմական փոփոխությունները:

Այս գործում, ինչպես նշեցինք, անչափ մեծ է մամուլի դերը, որը հսկայական նյութ է մատակարարում բառարանագրությանը, քանի որ այն միշտ էլ առաջինն է արձագանքում հասարակական կյանքի տարբեր բնագավառներում տեղի ունեցող փոփոխություններին⁴:

Ժամանակակից մամուլի բառապաշարն աչքի է ընկնում ոչ միայն նորակազմ բառերի առատությամբ, այլև իմաստային բազմազանությամբ:

Հրատարակվող թերթերի և գիտական ամսագրերի գրեթե յուրաքանչյուր համարում կարելի է հանդիպել գիտությանն ու տեխնիկային վերաբերող նոր տերմինների, նոր ժամանակների մտածողությանը, երևույթներին և իրադարձություններին համապատասխանող բազմաթիվ նորաբանությունների:

Ընդհանրապես մամուլի բառապաշարի կիրառական ոլորտը խիստ բազմազան է: Այն ներառում է հասարակական-քաղաքական, գիտական, մշակութային, ռազմական, տնտեսագիտական, մարզական բնագավառները. օրինակ վարչակազմ, օրինահարգ, իշխանատենչություն, քարոզարշավել, ազգամերձ, թամանյանաշունչ, աղբեքանամետ, զնաճային, ստացույթ, ալիքահամալիր, ռադիոեկեղեցական, տիեզերահարթակ, կուսակցասիրություն, ծխախոտահումք, քաղաքական էլիտա, տիեզերական կապ, պատմահենություն, ջրազավթում, միտինգախոս, եվրաֆունկցիոներ, լոբբիականացում, դառնաշատ, զինաշուկա և այլն:

Նշված բառերն ու բառակապակցությունները կիրառական հաճախակա-

⁴ Այս մասին ավելի մանրամասն տես Ռ. Շալունց, Մամուլի և իրապարակախոսության լեզուն, Երևան, 1987: Յու. Դավթյան, Արևելահայ մամուլի լեզուն հետխորհրդային շրջանում, Երևան, 2006 և այլն:

Շուրջամբ որոշակի դեր ունեն լեզվի մեջ և իմաստային առումով չեն զիջում մեր լեզվում եղած մասնագիտական բառերին ու տերմիններին:

Դրանք միաժամանակ ցույց են տալիս, որ մամուլը, իրոք, մեծ դեր ունի լեզվի բառապաշարը հարստացնելու և նորոգելու գործում:

M. Soghomonyan

РОЛЬ ПРЕССЫ В РАЗВИТИИ ЛЕКСИКИ АРМЯНСКОГО ЯЗЫКА

В прессе, а также в СМИ отражается нынешнее состояние языка, лексические изменения, что способствует его развитию и обновлению.

Развитие и совершенствование лексики армянского языка наиболее ярко проявилось в 90-х годах прошлого столетия.

Почти в каждом номере издаваемых газет и журналов можно встретить новые слова, относящиеся к различным сферам, новейшие термины и многочисленные неологизмы. В лексике прессы наблюдается разнообразие общественно-политические, научные, военные, экономические, спортивные термины и понятия. Отражение подобных слов и терминов в качестве неологизмов в словарях крайне важно с точки зрения истории армянского языка.

M. Soghamonyan

THE ROLE OF PRESS IN THE DEVELOPMENT OF THE ARMENIAN LANGUAGE

The state of Armenian language and the changes in its word-stock are reflected in the press as well as in media information. The process of the enrichment and improvement of the Armenian language word-stock took place more obviously in the 90s of the previous century.

We meet modern terms and new words in every page of the newspapers and magazines being published. The lexicon used in the press is quite various involving almost all the spheres of life. The involvement of such words in dictionaries is extremely important for the history of the Armenian language.